



Հայոց լեզու

9-րդ դասարան ընդունվողների համար, 2016-2017 ուստարի

1. Ըստ անհրաժեշտության լրացրո՛ւ տեքստի բաց թողնված տառերը և կետադրի՛ր (6 միավոր, ուղղ. - 1,0; կետ. -0,5):

Հինավուրց մի երկրում ապրում էր մի դյու...ագուն խարտիշահեր ու պար...նահասակ: Նրա նժույգի սմբակները երբև... չէին պ...տորել կարկաչուն աղբյուրների վճիտ ջուրը և չէին կոխկ...տել ծաղիկները նրբագեղ քնքուշ ու եր...ներանգ:

Մի օր էլ հեռվում բար...րաբերձ լեռների գո...ում նա նկատեց մի լուր... լճակ որպես բոլորակ մի հայելի: Նրա վճիտ ու ողորկ հայելու մեջ տեսավ մի չնաշխարհիկ դ...խուհու լուսե դեմքը: Լուս...նկա գիշերների պես սևաթույր մազերով աղջիկը նստած էր մարմարյա պատ...գամբում:

Կտրի... պատանին խթանեց ձին և սուզվեց լճակի խորքը հասնելու անրջային այդ կույսին: Պատանին սուզվեց մինչև հատակը բայց ոչ մի ապարանք չտեսավ այնտեղ: Քուն ու դա...ար կորցրած նա գիշերուզ...ր նժույգին ձուլված հա...թահարում էր խոչ...նդոտները որոնելով աղջկան:

Տղան անցավ հեք...աթային ծովեր մ...կածուփ օվկիանոսներ անցավ ձյունափառ լեռներով ու վերջապես գտավ ապարանքը լեռների ծերպերին կառ...ած:

2. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները (3 միավոր -0,5):

Ականակիտ-----
երազային-----
թագուհի-----
լազուր-----
երիվար-----
փոթորկալի-----

3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր հետևյալ բառերի հականիշները (3 միավոր -0,5):

- Գաճաճ-----
- պղտոր-----
- գտնել-----
- միագույն-----
- նորագույն-----
- անհարթ-----

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր երկու բարդաձանցավոր բառ, վերլուծի՛ր բառակազմորեն՝ ցույց տալով հնչյունափոխությունը, եթե կա (2 միավոր -0,5):

5. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր 3 հարակատար դերբայներ, կազմի՛ր դրանց անորոշ դերբայի ձևերը (1,5 միավոր -0,5):

6. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր *ու հոլովման* պատկանող 3 գոյական բառ, դրանցով կազմի՛ր բառակապակցություններ այնպես, որ այդ գոյականները ցույց տան պատկանելություն (ո՞ւմ հարցին են պատասխանում) (1,5 միավոր -0,5):

Օրինակ՝ մատանի – մատանու – մատանու քարը:

7. Գրի՛ր շարադրանք քո սիրած մարզաձևի մասին. 10-15 նախադասություն (3 միավոր, ուղղ. -0,5, կետ. -0,2):

